

Ռաուլ՝ արժանաւոր եպիսկոպոս, երբ Եփրեմի ձեռքը կը շինէր այս գեղեցիկ (նկարը)...»:

Յունական արձանագրութիւնը, որ մեծ մասով տակաւին կը տեսնուի, ամբողջութեամբ կարելի է վերահաստատել շնորհիւ ԺԳ. դարու յոյն ուխտաւորի մը եւ Տը Վոկէի կողմէն ամբողջացած և ուղղուած Գուարէզմիոսի օրինակներուն: Տարբեր բառերով այս արձանագրութիւնը կը հաստատուի լատիներէն տեղեկութիւններով, որ է հետեւեալը. «Ներկայ գործը աւարտած է նկարիչ և մողայիք շինող վանական Եփրեմին ձեռքով, Մանուէլ Կոմնենոս մեծ կայսեր եւ Երուսաղէմի մեծ թագաւոր Ամորիի եւ Բեթղեհէմի եպիսկոպոս Ռաուլի օրով, 6677 տարուոյն, Ընդիկտիոն Բ. կառ աւելի շառ 6673, Ընդիկտիոն ԺԲ.»: Առաջին թուականը ըստ Պոյսի տուժարահաշուին, որ ժամանակ Մարմնառութեան առաջին տարին կ'իյնայ աշխարհի ստեղծագործութեան 5509ին և կը համապատասխանէ 1169 քրիստոնէական թուականին: Այս ժամանակ կը թագաւորէր Մանուէլ Կոմնենոս Բիւզանդիոնի մէջ (1143 - 1180), Երուսաղէմի մէջ Ամորի (18 Փետր. 1162 — 11 Յուլիս 1173), և Ռաուլ եպոս. Բեթղեհէմի եպիսկոպոսական աթոռը կը գրաւէր: Երկրորդ թուականը ԺԳ. դարու յոյն անանունէ մը ընդունուած՝ կը համապատասխանէ 1165 փրկչական թուականին:

Այժմ ներկայացնենք մեծ գաւիթին հիւսիսային սիւնաշարքի սրբոց նկարները. 1. Ս. Մակար, որ կը բռնէ խաչ մը և հագած է արմուենիէ հիւսուած վերարկու. 2. Ս. Անտոն, գէմքին վարի մասը կը մնայ, հագած է կնգղաւոր երկայն վերարկու մը. 3. Ս. Երթիսկոս, հագած է յունական շուրջառ մը, աջ ձեռքովը կ'օրհնէ և ձախովը բռնած է գրուածք մը. 4. Ս. Դեոք, աջը կը գտնուի գեղարդ մը եւ առջեւը սուր մը՝ որուն կոթը խաչածէ է: Աջ կողմն է վահանը. 5. Ս. Լեոնարդոս, հագած է սեւ վերարկու մը եւ կոթնած է գաւազանի մը վրայ. 6. Ս. Կոզմա, հագած է կարմիր վերարկու. 7. Ս. Դաւիթնոս, կարմիր վերարկու հագած է. 8. Ս. Կարպոս, հաւանաբար Իրլանտացի, Երուսաղէմ այցելած է. 9. Ս. Յովնանիկա Աւեսարունիչ, սուրբը իր ձեռաց մէջ ունի իր Աւետարանը:

Մեծ գաւիթին հարաւային սիւնաշարքին վրայ 1. Ս. Թեոդոսիոս, հագած է ճերմակ վերարկու մը. 2. Ս. Սաբա, հագած